ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. 511703.

ՎԴ -_Ե_

«**02**» **հոկտեմբերի 2019թ.**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ԶԱՐՈՒՀԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Նախշքարյան,

Ձեր կողմից 2019թ. սեպտեմբերի 19-ին կայացված՝ թիվ ՏԴ1/0396/02/15 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին որոշման կապակցությամբ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունված՝ 17.06.1998թ.) 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցերը հարուցվում են հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունված՝ 09.02.2018թ.,) 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցը

ներկայացվում է հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Այսինքն, կարող ենք արձանագրել, որ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ, բացառիկ տարածքային ընդդատության վերը նշված կանոնի շրջանակում հայց ներկայացնելու ընթացակարգի առումով, օրենսդրի կամքն էական փոփոխությունների չի ենթարկվել:

Թիվ ՏԴ1/0396/02/15 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումը Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2015թ. որոշմամբ ընդունվել է վարույթ և գործի հետագա քննությունը (այդ թվում՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում) տեղի է ունեցել ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով կայացված եզրափակիչ դատական ակտը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից՝ հայցի մերժման մասով բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ բեկանված մասով ամբողջ ծավալով նոր քննության և, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործն ընդունել է վարույթ և ձեռնամուխ է եղել գործի հետագա քննությանը ՀՀ քաղաքացիական դատավարության 2018 թվականի փետրվարի 9-ի օրենսգրքի իրավակարգավորումներով՝ սույն գրությամբ արտահայտվող դիրքորոշման ձևավորման հիմքում դրվել են ՀՀ քաղաքացիական դատավարության 2018 թվականի փետրվարի 9-ի օրենսգրքի նորմերը:

Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածներով սահմանված կանոնների խախտմամբ:

Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Իսկ ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով, որոնք վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 22-րդ, 24-րդ և 138-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա

այդ գործը պետք է հանձնի ըստ ընդդատության՝ հիշատակված նորմերում ամրագրված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վերը նշված իրավակարգավորումների և ընդդատության ինստիտուտի բովանդակության համատեքստում, հարկ է նշել, որ գործն ըստ տարածքային ընդդատության հանձնելու և այն ստանալու իրավասությունները վերապահված են միայն առաջին ատյանի դատարաններին, այսինքն՝ գործն ըստ տարածքային ընդդատության հանձնելու և ստանալու իրավահարաբերության պատշաճ սուբյեկտներ կարող են հանդիսանալ միայն առաջին ատյանի դատարանները, իսկ վերադաս ատյանները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համատեքստում, օժտված չեն առաջին ատյանի դատարաններ ըստ տարածքային ընդդատության քաղաքացիական գործեր հանձնելու իրավասությամբ:

Գործն ըստ տարածքային ընդդատության հանձնելու իրավահարաբերության պատշաճ սուբյեկտից՝ առաջին ատյանի դատարանից, գործն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի դատարանը յոթնօրյա ժամկետում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- հայցադիմումը վարույթ ընդունելու մասին՝ դրանով իսկ հայտնելով իր համաձայնությունը գործի տարածքային ընդդատության կապակցությամբ,

- գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ դրանով իսկ հայտնելով իր անհամաձայնությունը (վեճը) գործի տարածքային ընդդատության վերաբերյալ:

Նշված կարգի պահպանմամբ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկված լինելու դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը որոշում է այն առաջին ատյանի դատարանին, որն ըստ տարածքային ընդդատության, իրավասու է իրականացնել գործի հետագա ըստ էության քննությունը:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ հարկ է փաստել, որ տարածքային ընդդատությունը որոշելու նպատակով գործը Վճռաբեկ դատարանի նախագահին կարող է ուղարկվել միայն ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

*1. տարածքային ընդդատության վերաբերյալ **վեճ է ծագել** գործը հանձնող և այն ստացող **առաջին ատյանի դատարանների** միջև,*

2. գործն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի դատարանն առանց գործը վարույթ ընդունելու, առանց որևէ հետագա դատավարական գործողություններ կատարելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված յոթնօրյա ժամկետում որոշում է կայացրել գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

Միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկած լինելու դեպքում է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը կարող է իրացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված՝ գործի տարածքային ընդդատությունը և ենթակայությունը որոշելու իր լիազորությունը և կայացնել համապատասխան որոշում:

Այս դեպքում «Խոր արմատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ հողամասից վտարելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Կոմիտեի ընդդեմ հայցվորի և Ընկերության՝ հարկադիր գույքային սերվիտուտ սահմանելու պահանջի մասին թիվ ՏԴ1/0396/02/15 քաղաքացիական գործը հարուցվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Նույն դատարանի (դատավոր՝ Ա.Խաչիկյան) 15.09.2015թ. որոշմամբ հիշյալ քաղաքացիական գործը հանձնվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ.Ներսիսյան) 21.05.2018թ. վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են:

Նշված վճռի դեմ հայցվորի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2018թ. որոշմամբ բավարարվել է մասնակի՝ նշված վճիռը հայցի մերժմանը վերաբերող մասով, բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ բեկանված մասով ամբողջ ծավալով նոր քննության:

Թիվ ՏԴ1/0396/02/15 քաղաքացիական գործը 19.02.2019թ. որոշմամբ ընդունվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (**դատավոր՝ Զ. Նախշքարյան**) վարույթ:

Նշված գործով 01.04.2019թ., 10.06.2019թ., 10.09.2019թ. նշանակվել են դատական նիստեր, իսկ 19.09.2019թ. կայացվել է գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին որոշում՝ մասնավորապես հետևյալ պատճառաբանությամբ.

«Տվյալ դեպքում, անհամաձայն լինելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ ամրագրված ընտրված տարածքային ընդդատության հետ, անհրաժեշտություն է առաջացել գործի նախնական քննության փուլում լուծել ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունած գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հարցը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

Միաժամանակ պետք է արձանագրել, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասը սույն գործով կիրառություն է ստացել ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Զ. Նախշքարյանիս կողմից գործն ստանալուց հետո, իսկ նախկին իրավակարգավորումները գործն ստացող դատարանի համար դարձյալ ընդդատությամբ այլ դատարանի հանձնելու հնարավորություն չեն նախատեսել:

Քաջ գիտակցելով գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված յոթնօրյա ժամկետի սահմանափակումը՝ գտնում եմ, որ այն նախատեսված է գործն ըստ տարածքային ընդդատության ստանալու և ոչ թե գործի վերստին քննության դատավարական փուլի համար, ուստի տվյալ ժամկետի կիրառությունը գտնվում է բացառապես տարածքային ընդդատությամբ ստացված դատավարական ինստիտուտի տիրույթում»:

Փաստորեն, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Զ.Նախշքարյան) հիշյալ քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին է ուղարկել Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման հետ համաձայն չլինելու հիմքով, փաստելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված յոթնօրյա ժամկետի սահմանափակումը սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ այն նախատեսված է գործն

ըստ տարածքային ընդդատության ստանալու և ոչ թե գործի վերստին քննության դատավարական փուլի համար:

Մինչդեռ, ինչպես արդեն վերը նշվեց, Վճռաբեկ դատարանի նախագահը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ տարածքային ընդդատության և ենթակայության վերաբերյալ առկա է վեճ գործը հանձնող և այն ստացող առաջին ատյանի դատարանների միջև, ինչպես նաև գործն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի դատարանն առանց գործը վարույթ ընդունելու, առանց որևէ հետագա դատավարական գործողություններ կատարելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված յոթնօրյա ժամկետում դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

Ընդ որում, հարկ է նշել, որ գործի տարածքային ընդդատության և ենթակայության հետ անհամաձայնություն ունենալն ինքնին բավարար չէ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի իմաստով դիմելու համար, այլ անհրաժեշտ է, որ առկա լինեն վերը նշված բոլոր պայմանները:

Տվյալ դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի իմաստով չի կարող վեճ ծագել նաև հետևյալ պարզ պատճառաբանությամբ.

- Վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ՏԴ1/0396/02/15 քաղաքացիական գործով թեև բողոքի քննության շրջանակներում ընդդատության հետ կապված հարցի քննություն չի իրականացրել *(բողոքում նման հարց բարձրացված չլինելու հիմքով)*, այնուհանդերձ որոշել է գործը՝ բեկանված մասով, ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան,

- Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, վերը նշված վերլուծության հաշվառմամբ, չի կարող հանդիսանալ գործն ըստ տարածքային ընդդատության հանձնելու իրավահարաբերության պատշաճ սուբյեկտ:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները, տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցի քննարկումը և լուծումը դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված

լիազորությունների շրջանակից, որպիսի պարագայում և բացակայում է բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից համապատասխան որոշում կայացնելու օրենսդրական հիմքը:

Կից ուղարկվում է՝ թիվ ՏԴ1/0396/02/15 քաղաքացիական գործը՝ բաղկացած 4 հատորից. 1-ին հատորը՝ «128» թերթ, 2-րդ հատորը՝ «109» թերթ, 3-րդ հատորը՝ «130» թերթ, 4-րդ հատորը՝ «135» թերթ:

Հարգանքով՝

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ